

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мпакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՄԱՐՏ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիւրով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Կիրակի, մարտի 19-ին, Մոգնու ա. Գէորգ եկեղեցում կատարվելու է

ԴԱՐԻԱ ԶԱՆԱՐԵՎՆԱ ՄԻՐԶՈՅԵԱՆՑԻ

հոգեհանգիստը՝ նրա մահւման քառասունօրեակի առթիւ: Պատարագը սկսվելու է առաւօ-
տեան 10¹/₂ ժամին, իսկ հոգեհանգիստը 12-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յաւալի երեւոյթ. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Երկրաշարժից վնասվածների օգտին.
Նամակ Գորու գաւառից. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԵԱՆ. Ներքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Աղէտի չըջանում:

ՅԱՆԱՒԻ ԵՐԵՒՈՑԹ

Կարելի էր երթագրել, որ մեր մէջ ընթեր-
ցանութիւնը օրից օր մեծ ծաւալ է ստա-
նում եւ գրեթէ տարածվում են ընդարձակ
ծաւալով: Սակայն փաստերը ցոյց են տա-
լիս, որ այդ կողմից մենք անսխալանքի
փնտրելու մէջ ենք: Բազմաթիւ հրատարա-
կութիւններ, որոնց մի նշանակւոր մասը
թարգմանված է յայտնի հեղինակներից,
մնում են առանց սպառնալու: Հեղինակներ
եւ թարգմանիչներ իրարմէջ չեն գտնում:
Եղած դրավաճառութիւնը պահպանվում է
նրանով, որ գրականութիւնը պահում է
զանազան լեզուներով գրքեր, անհրաժեշտ
դասական ձեռնարկներ եւ երբեմն վերց-
նում է իր վրա եւ թղթեղէն մատակա-
րարելու պարտաւորութիւն:

Ընտանեկան կանոնաւոր ընթերցանու-
թիւնը դեռ պահանջ է դարձել շատերի
համար եւ գրքի վրա ծախսած գումարը
համարվում է աւելորդ մի բան եւ շուտ-
լուրթիւն: Նախ քան տեսնենք կը հանդի-
պէք, որ տան զարդերից մէկն էլ գրքերը
լինէին: Գրքը հալածվում է իբրեւ մի
օտար առարկայ, որի համար նշանակված
է միայն դպրոցը եւ նա գործ չունի տների
հետ: Պէտք է մի շատ բացատրիկ հանգա-
մանը առաջ դաշ, որ մի որ եւ աշխա-

տութիւն գրաւի ընթերցողներ: Նոյն իսկ
ամենից շատ սիրված եւ յարգված հեղի-
նակների երկարութիւններն առաջին տը-
պագրութիւնը հազիւ հազ սպառվում է
չորս հինգ տարվայ ընթացքում:

Կա շատ ցաւալի հանգամանք է: Կա-
րելի էր յուշաւ, որ ընթերցանութեան
միջոցով կարող կը լինենք մաքաւել բազ-
մաթիւ նախապաշարմունքների դէմ, ո-
րոնք բուն են զրել մեր ժողովրդի զանա-
զան խաւերում, տալ ժողովրդին զանազան
գիտելիքներ իր կեանքի պայմանների մա-
սին, ծանօթացնել ժողովրդին լուսաւոր
աշխարհի մտաւոր կեանքի արտադրու-
թիւնների հետ, մի խօսքով ժողովրդի հետ
խօսել ամեն տեսակ կարեւոր էական եւ
հետաքրքիր առարկաների մասին: Սակայն
իրականութիւնը ցոյց է տալիս, որ այդ
կողմից մեր առաջադիմութիւնը շատ թոյլ
է, իսկ մի քանի տեղերում նա մինչեւ ան-
գամ թուլացել է առաջմանից:

Մեր գաւառներում ցրված ինտելիգենտ
ոյժերը պէտք է ներկայ հանգամանքի վրա
ուշադրութիւն դարձնեն եւ նպաստեն ըն-
թերցանութեան գործին: Կրթնով դպրո-
ցում եղածները կը լրացնեն իրանց կրթու-
թիւնը, իսկ առհասարակ ժողովուրդը
կրթութեան մասւոր հետաքրքրութեան,
որ այնքան թոյլ է մեր չէ ներկայումս:

Աղբաւ մարդիկ գիրք չեն ուզում կար-
դալ, որովհետեւ զբաղված են օրական
պարուտի հոգսերով եւ խնայում են փող
ծախսել գրքերի վրա, իսկ հարուստները
չլացած են իրանց ունեցածից եւ աւելորդ
են համարում զբաղվել գրքերով, որոնցից
ոչ մի նոր օգուտ չեն սպասում եւ առանց
որոնց նրանց արդէն ձեռք են բերել բա-
րեկեցութիւն: Իսկ մտաւոր հարստութիւ-

նը եւ բարոյական կրթութիւնը դեռ չեն
ձանաչված իբրեւ հարստութիւն եւ իբրեւ
կեանքի անհրաժեշտ պահանջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մինչդեռ Շարմտանները շարունակում են
ամեն դէպքում բղաւի, թէ թիւրքաւաւերի
դժբաղդութիւնները երկինքը հասել է այդ
պատճառով, որ հայերը կաթօլիկութիւնն չեն
ընդունում. — բուն կաթօլիկ աշխարհի մէջ նո-
րից երեւան է գալիս մի շարժում, որի նպա-
տակն է մաքրել պապականութիւնը հնադա-
րեան զաղափարներից եւ կեղտորդից, նոր ուղ-
ղութիւն տալ այդ անշարժացած եւ ամեն մի
նորութեան կատաղի թշնամի հիմնարկութեան:
Այսպիսի փորձեր շատ են եղել Եւրոպայում,
բայց վատիկանի յամառութիւնը ոչնչացրել է
բոլոր բարի ձգտումները եւ վերջ է վերջոյ
ընթացների բերանը փակելու համար ընդունել
է անսխալականութեան դոգման: Այժմ շար-
ժումը սկսվել է Ամերիկայում: Եւրոպայի աշ-
խարհը հետզհետէ գալիս է այն եզրակացու-
թեան, որ իրան է վերապահված հին, փոստ
Եւրոպան առողջացնելու, մարդկայնացնելու
խորհուրդը. եւ հաւաք միջամտում է Եւրո-
պայի ամենահեղինակաւոր հիմնարկութեան —
Հռոմի կաթօլիկութեան գործերի մէջ: Միջա-
մտողը, ի հարկէ, Ամերիկայի այն մասն է, որ
կաթօլիկութիւնն է դաւանում, հետեւաբար եւ
կարող է մօտենալ սուրբ աթոռին ոչ իբրեւ
երեսն անիծելու, հերետիկոս, այլ իբրեւ հա-
րազատ եւ շատ հարազատ որդի: Ինչպէս գի-
տնէք, գործնական եանկիները, որոնք արդէն այն
նշանաւոր գիշողութիւնը ձեռք բերին, որ մին-
չեւ այժմ ամուրի քահանայները ամուսնանում
են եւ իրանց կանանց հետ յայտնվում են հա-
սարակութեան մէջ, որը ոչ միայն չէ վրդով-
վում կաթօլիկ եկեղեցու այդ հիմնական կար-
գը խախտելուց, այլ եւ շատ ուրախ է, որով-
հետեւ ամենքին զգուշացրել է քահանայների ա-
նառակութիւնը: Բայց այդքանով չեն բաւա-
րանանում. Ա. Պետրոսի հօտին պատկանող
եանկիները եւ, ինչպէս պատմում է վերիդին
անունով մի պարոն «Новое Время» լրագրի մէջ,
վատիկանն արդէն գիտէ, որ աւելի հիմնական

վերանորոգումների պահանջներ կան Ամերի-
կայում եւ ա. աթոռն արդէն կարողացել է
սկսել այդ նոր շարժումը ամերիկականութիւն
անունով:

«Ամերիկականութիւնը», ինչպէս որոշվում
են այդ շարժման կողմնակիցները, ամերի-
կական կղերի ձգտումն է ամրացնել եւ «ճա-
նալացնել» կաթօլիկութիւնը, այնպէս որ նրա
եւ ժամանակի ողոր մէջ ներդաշնակութիւն
հաստատվի: Իսկ եղբայրները եւ նրանց բա-
րեկանները ասում են, որ դա մի հոսանք
է, որ մերժում է ամեն մի գերբնական բան
եւ տապալում է ամեն մի կրօն, որ հիմնված
է Յայտնութեան վրա: Եանկիները սառնա-
սրտութեամբ պատասխանում էին, որ այդ-
պիսի հոսանքի հետը անգամ գոյութիւն
չունի ոչ մի տեղ, բայց ֆանատիկոսների
հիւանդ երեւակայութիւնից: Հռոմում ամե-
րիկականութիւնը անագին չիթնութիւն ա-
ռաջացրել մասնաւոր այն պատճառով, որ
այստեղ ա. աթոռը, որ հնուց այնքան բա-
զախ էր հարկել ամեն տեսակ նրբութիւններ
եւ առարկութիւններ, ոչինչ չէր կարողա-
նում անել այն խորամանկ մեքենայի դէմ,
որ իր պողպատէ ձիւրանները խրել է նրա
մէջ եւ որը մտածել ու ստեղծել կարող էր
միայն հնարագէտ եանկիի ճարպիկութիւնը:
Իր ամբողջ երկար պատմութեան ընթաց-
քում պապականութիւնը այս առաջին ան-
գամն էր ծիծաղելի դրութեան մէջ ընկնում
եւ հարկադրված էր մրցել «բայցերի» թէ-
նեթի» սխալում: Դէմ է Ամերիկականութիւնը
թաղնված էր այդ թէնեթի» ետեւում եւ
նրա դէմ ոչ մի դէպքում չէր կարելի գոր-
ծադրել այն կաշմարիտն ու անէծքները, ո-
րոնց պապականութիւնը արձակում էր իր
ճանապարհը կտրող սխալներով: Դէմ է Այս-
տեղ այդ միջոցը անպէտք էր: Դրութիւնը
ամենամատկործին էր, քանի որ ամերիկա-
կանութեան դատողութիւններից ոչ մէկը չէ
գուրա գալիս կաթօլիկական վարդապետու-
թեան խիստ չըջանից: Ընդհանրապէս ամե-
րիկականութիւնը, ինչպէս համոզված են
նրա կողմնակիցները, ոգևորված է հին ե-
կեղեցու ամենաբարձր ձգտումներով: Հրա-
ժարվել ամերիկական ծրագրից եւ դատա-
պարտել նրան — դա պապի համար կը նշա-
նակէր հրաժարվել եկեղեցական ամբողջ ա-
ւանդութիւնից:

Իրաւ, եթէ տեսնենք թէ ինչպէս են վե-
րաբերվում ամերիկացիները պապի անսխալա-
կանութեան զաղափարին, ամեն կը հասկա-
նանք թէ եանկիները ինչպէս գիտեն մօտենալ
նոյն իսկ ամենամեծ դժուարութեան:

Պապական անսխալականութիւնը, ասում
են նրանք, ամենամեծ յաղթութիւնն է հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Ղ Է Տ Ի Շ Ր Զ Ա Ն Ո Ւ Մ

(Շարունակութիւն)

Հետեւեալ գիւղը, ուր մենք կանգ առինք,
Բալիս օ գիւղն էր: Բալիսի 48 տներից հազիւ
աղաքակ էին երեքը, մնացածները խորտակ-
վել էին: Մենք չէինք սպասում Բալիսում
տեսնել ժողովուրդ, որովհետեւ երկրաշարժից
յետոյ նրա բնակիչները ցրվել էին չըջակայ
գիւղերը եւ այնտեղ պատասպարվել աղգական-
ների եւ ծանօթների մօտ: Այժմ նրանք սկսել
են նորից վերադառնալ: Երկրաշարժի ցնցում-
ների թուլանալը, զարնան սկսվելը, դաշտային
պարապմունքների մօտենալը զորում է նրանց
վերադառնալ իրանց հողերը եւ պատրաստվել
ցանքներ անելու: Բացի այդ գիւղերի մէջ մը-
նացել են որոշ քանակութեամբ խոտ եւ դար-
ման, որոնց տեղափոխելը դէպի հեռաւոր տե-
ղեր շատ մեծ նեղութիւնն եւ աշխատանք կը
պահանջէր: Աւելի յարմար էր կենդանիներին
զիւլ բերելը եւ եղած պաշարներով նրանց
կերակրելը:

Բալիս գիւղում զարկված է մի մեծ գինու-
րական վրան, որ կարող է պատուաբերել իր մէջ
մինչեւ 50 անձ. վրանի մէջմտնում գետնի վրան
է երկաթեայ մի վառարան, որով տեքացվում
է ներսի օդը: Յատակի վրա ձգված են գերան-
ներ, որոնց վրա շարված են տախտակներ:
Այսպիսով կազմվել է չոր, խոնաւութիւնից ա-

զատ մի տարածութիւն, որի վրա գիւղեր փռ-
վում են անկողիներ: Տախտակների մեծ մա-
սը կամի տախտակներ են, որ գործ են ած-
վում ամառը հացը կալելու համար: Գիւղա-
ցիների մի մասը սկսել է յարմարեցնել իր հին
եւ խախտված շինութիւնները ժամանակաւոր
կենցաղավարութեան համար, մինչեւ որ կը
սկսվի տների շինութիւնը: Այդ տներում ապ-
րելը վտանգաւոր է, որովհետեւ նրանք անմի-
ջ ընկնում են փայտի վրա, որովհետեւ զանազան
արտադրանքներ ուսելը կերպով:

Բալիսում գեռ գոյութիւն ունի ճաշարան
մշակների համար: Միւս կարօտ գիւղացիները
ստանում են որոշ գրամական օգնութիւն կամ
ալիւր: Ճաշարանի փոքրիկ սենեակում նստած
են զիւրուքի մի գիւղացիներին, որոնք եկել էին
բժշկի մօտ խորհուրդներ եւ դեղեր ստանալու:
Գիւղացիների մէջ շատ կան հիւանդներ, որոնք
սակայն սովորաբար չեն դիմում բժիշկներին,
որովհետեւ օրանք սակաւաթիւ են եւ անկա-
րող են այցելել գաւառի բոլոր մասերը: Պէտք
է նկատել, որ վերջին ժամանակները շատացել
են այն հիւանդութիւնները, որոնք առաջ են
եկել մրսածութիւնից: Գիւղացիները վախե-
նում են քնել տներում եւ գիւղերում են բացօ-
ղեայ, որտեղ շատ հեշտ է մրսել: Այդ պատճա-
ռով ժամանակաւոր յարմար բնակարանների
հարցը դարձել է հերթական երկրաշարժի շը-
ջանում: Տեղական կօմիտեւոր ստացել է թա-
ղեքներ, որոնցից պէտք է կազմի վրանների
Առաջիկայ շաբաթվայ ընթացքում պէտք է
մի քանի վրաններ կազմվէին փորձի համար:
Ճաշարան եկան եւ մի քանի որբեր գաւ-
առակներ իրանց վիճակի մասին: Գիւղական

որբերի վերաբերութեամբ այդտեղ պարզվեց
մի հետաքրքրական երեւոյթ: Այդ որբերը գրկված
են եղել հօրից եւ նրանց խնամում էր մայրը:
Յետոյ մայրը մարդու է գնում ուրիշ գիւղ եւ
թողնում իր զաւակներին նախկին տանը: Այդ
օրից մօր եւ նրա զաւակների յարաբերութիւ-
թիւնը կարծում է, կարծես զաւակները այլ
եւս այդ մօրը չեն պատկանում: Այսպիսի որ-
բեր կան ամեն գիւղում եւ այդ երեւոյթը հա-
մարվում է գիւղում բնական: Որբերի խնա-
մատարութիւնը վերջնում են իրանց վրա նրանց
հօրեղբայրը կամ մի ուրիշ ազգականը: Մայրը
անյարմար է համարում իր զաւակներով մնալ
նոր օջախի մէջ եւ հին ընտանիքը միացնել
նոր ընտանիքի հետ:

Պէտք է նկատել, որ Բալիս գիւղի հողի մեծ
մասը գտնվում է լեռնալանջի վրա, որտեղ հա-
ցահատիկները մրսում են: Գիւղացիները ստիպ-
ված են հողի ամբողջ կէսը կամ երկու երրոր-
դական մասը յատկացնել ջրանոց ցանքներին եւ
մնացած փոքր մասը գործելու: Նրանք շատ
զգոյշ են սերմացուի վերաբերութեամբ եւ
աշխատում են ձեռք բերել միայն մերձակայ
գիւղերից, վախճալով որ հեռաւոր տեղե-
րի սերմերը չեն կարող դիմանալ Բալիսի
լեռնալանջի ցրտերին: Նոյն վիճակի մէջ են եւ
երկու Սամար գիւղերի ցանքները: Թէ Մեծ
եւ Թէ Փոքր Սամար գիւղերը ստիպված են
շատ անգամ իրանց ցորենի ցանքները մեծ
չափով պակասեցնել տեղի ցրտութեան պատ-
ճառով:

Բալիս գիւղի վերաբերութեամբ պէտք է ա-
սել, որ մեծ դժուարութիւն պէտք է զգացվի
նոր գիւղատեղ ընտրելու ժամանակ: Գիւղը

գտնվում է քարափի ստորոտում: Նրա առա-
ջը ձգված է հաւասար տեղ: Սակայն այդ
տեղը ճահճային է եւ նրան անկարելի է ցա-
մաքեցնել, որովհետեւ ջուրը ստորերկրեայ է:
Ուրեմն գիւղը տեղափոխել այդ մարդագետնի
վրա անյարմար է: Մնում է գիւղի համար ո-
րոշել ուրիշ կէտեր: Սակայն հաւասար եւ տա-
փարակ տեղեր չը կան, կամ նրանք ունեն
շատ փոքր տարածութիւն: Մնում է գիւղի մի
մասը թողնել նախկին տեղում, իսկ միւսը
վերցնել այն տարածութիւնից, որ ձգվում է
գիւղի ետեւը: Մի թեթեւ նախաձեռն անելով
եւ մեր հարց ու փորձերը վերջացնելուց յետոյ
ուղեւորվեցինք գէպի Մերենիա:

Երկրաշարժի մասին կարողացած թղթակցու-
թիւններից մենք գիտէինք, որ ամենից շատ
վնասված գիւղն էր Մերենիան, որտեղ
փրատակների տակ մնացին այնքան մարդկային
դոներ եւ տնային կենդանիներ: Մարդ տրա-
մագրութեան տակ էինք մօտենում այդ դժ-
բաղդ գիւղին: Ահա նա մեր առաջն է իր իս-
կապէս սարսափելի աւերմունքներով: Տները
հիմնովին կործանված, հաստ գերաններ միջից
կէս եղած, միմեանց վրա դիզված քարերի եւ
փայտերի անկողնապարան հողալոյտներ, խորտա-
կումների մի տխուր տեսարան:

Մեզ մօտեցան գիւղացիներ եւ առաջնորդե-
ցին դէպի գիւղի ներքւ: Մենք անցանք այն
տեղով, ուր զարկված է եղել գինուրական մեծ
վրան: Նման այն վրանին, որ մենք տեսանք
Բալիս գիւղում: Այդ վրանը գիւղացիները
վերցրել էին այն պատճառով, որ նա զարկված
էր գիւղից դուրս գտնվող մի տափարակում,
որտեղ զարնան տալու թիւնից հողը սկսել էր

Վերադառնալով մեր գործերը՝ ճանապարհը
կանգ ղէպի Ախալպղաւք: Ճանապարհին չ
բռնակվում էր հարաւորօրծը մեզ հետաք
բող խնդիրներէ մասին: Այս թուս
գիւղացիներէ մէնք տեղեկացանք, որ նր
գիւղում աշտովում են թէ տեղական
ուրիշ տեղից բերած սերմերը: Նրանք
մեծ մասը, այն է $\frac{3}{4}$, են $\frac{1}{4}$ -ը ցանում են

